Արձանագրություն 4

ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/37 ծածկագրով ԼԵԴ լուսատուների և էլեկտրական սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Արարատ

27.09.2024թ.
Ժ. 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Քենդրջյան
Հանձնաժողովի անդամներ՝ Նունե Կարապետյան
Արտակ Զաքարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Մելքոնյան

1. Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցի կողմից ներկայացված հայտի անհամապատասխանության շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Լայթինգ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետում շտկել է հայտում առկա անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին

2.1. Ընդունել ի գիտություն, որ «Լայթինգ» ՍՊԸ-ն, «Ասմիդա» ՍՊԸ-ն և Ա/Ձ Էդմոնդ Հովհաննիսյանը ներկայացրել են գնումների մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հաստատել մասնակիցների որակավորման գնահատման արդյունքը «Լայթինգ» ՍՊԸ, «Ասմիդա» ՍՊԸ և Ա/Ձ Էդմոնդ Հովհաննիսյան՝ բավարար:

2.2 Հիմք ընդունելով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նախապատվություն տալու սկզբունքը՝ հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներ ճանաչել N1 չափաբաժնով՝ «Լայթինգ» ՍՊԸ-ին, N2 չափաբաժնով՝ «Ասմիդա» ՍՊԸ-ին և N5-6 չափաբաժիններով՝ Ա/Ձ Էդմոնդ Հովհաննիսյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3. դեմ – **0**:

3. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

3.1. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու մասին հայտարարությունը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

բ) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

գ) ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկները և պայմանագրերի նախագծերը ծանուցել անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ **0**:

4. Գնման ընթացակարգը N3 և N4 չափաբաժիններով չկայացած հայտարարելու մասին

4.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի N3 և N4 չափաբաժիններով բոլոր մասնակիցների կողմից առաջարկված գները բարձր են նախահաշվային գնից: Հետևաբար՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերոնշյալ չափաբաժիններով չկայացած հայտարարել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1. **ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/37** ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը 11:00-ին, հասցեն ք. Արարատ, Շահումյան 34:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ **0**:

Հանձ. նախագահ՝ _____ Կ.Քենդրջյան

Անդամներ՝ _____ Ն.Կարապետյան

_____ Ա.Զաքարյան

Քարտուղար՝ _____ Կ. Մելքոնյան